

յատկություններովը կ'արգասաւորուէին, տարաշխարհիկ բուսականութեան մը յոյզովն ու տեսքովը առուգացած: Արդեօք հայրենի հողին վրայ ցեղը մտաւորապէս չքացա՞ծ էր, երեւակայութիւնը մթագնած, թռիչքը ընդարմացա՞ծ էր: Ո՞վ պիտի երգէր ուրեմն հայրենի կտուրը, ո՞վ պիտի ոգէր Հայաստանին վիշտը, ո՞վ՝ հարազատ ու անկեղծ եւ յուզիչ շեշտով՝ պիտի խօսէր մեզ հայրենիքի խոր ու անպարագիծ ու պատկառարկու տառապանքին վրայ: Սեւ բռնութեան տապարը մինչեւ հայուն սի՛րտը, մինչեւ հայուն գա՛նկը հասած էր:

Եւ ահա յանկարծ գաւառի սիրտէն հսկայ մը բարձրացաւ, երկար ատեն լուռ մնացող, չարտայայտուող ցեղին մտքին բովանդակ կուտակուած ուժգնութեամբը, եւ յորդահոսան գեղումովը.– Թլկատինցին: Շատ չանցած, անոր ետեւէն բարձրացավ, սինի մը պէս, Զարդարեան: Ուրեմն գաւառը չէր մեռած, ուրեմն ցեղին միտքը, իր տոհմիկ հարազատութեանը, իր վաղնջական աղուորութեանը եւ իր գմայլելի մեծութեանը մէջ անթեղուած կը մնար միշտ, կենդանի, աշխոյժ, խոր:

Իսկապէս, այդ վայրկեանէն ծնաւ գաւառի ճշմարիտ հայ գրականութիւնը ստուարանալով եւ ուռճանալով հետզհետէ: Եւ անտարակուսելի է որ Ռուբէն Զարդարեան գորաւոր սատարներէն մէկն է այդ գրականութեան, ուրեմն մեր տոհմային ճշմարիտ գրականութեան ծաղկումին:

Իր գուտ գրական գործը ոչ անշուշտ ստուար, բայց տարօրինապէս բազմերանգ է ու խտացած: Զարդարեան չէ շոպլած ինքզինքը, ուզած է եւ կրցած է *précieux*⁷ ըլլալ, ճիշտ այն նախադասութեան պէս գոր իրեն յատուկ է կերտել: Մէկ գործով, գոնէ ինծի ծանօթ, կարելի է հասկանալ զինքը, իր գրական բացառիկ ու ազնուական կերտուածքը, իր տաղանդին ամբողջութիւնը: Այդ գործը *Յայգալոյսն* է: Ի նկատի պէտք է առնել որ *Յայգալոյսի* պարունակութիւնը, մեծագոյն մասամբ կը պատկանի բռնակալութեան էն ահաւոր շրջանին, երբ գրիչն ու խօսքը ենթարկուած էին ամէնէն զարհուրելի խոշտանգումին որուն անոնք երբեք